

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Վ Ո Ր Կ Ա Ր Գ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

1. Սույն կարգը կանոնակարգում է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ապադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Ակադեմիա) 2020-2021 ուսումնական տարվա առկա ուսուցման մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի պայմաններում:

2. Հայաստանի Հանրապետությունում համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ Ակադեմիան ժամանակավորապես դադարեցնում է դիմորդներից թղթային տարբերակով դիմումների և փաստաթղթերի ընդունումը:

3. Ընդունելության քննություններին մասնակցելու համար դիմորդը էլեկտրոնային եղանակով ներկայացնում է՝

1) դիմում-հայտ՝ համաձայն **«Մագիստրատուրայի առցանց ընդունելություն»** էլեկտրոնային համակարգի,

2) հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները,

3) մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի:

4. Դիմորդը դիմում-հայտը Ակադեմիա է ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ Ակադեմիայի հաշվեհամարին փոխանցելով 2 000 ՀՀ դրամ:

5. Սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվում են հայատառ՝ PDF, իսկ լուսանկարը՝ JPG ֆորմատով: Փաստաթղթերի անվանման (File name) մեջ նշվում է փաստաթղթի անվանումը (լատինատառ):

6. Դիմորդը հավաստիացնում է, որ դիմում-հայտում և կից փաստաթղթերում ներկայացված տեղեկություններն արժանահավատ են ու ամբողջական, և գիտակցում

է, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմում-հայտի մերժման:

7. Փաստաթղթեր ընդունող հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունն ու համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգի» դրույթներին:

8. Դիմում-հայտը պատշաճ լրացնելու և ուղարկելու դեպքում էլեկտրոնային համակարգի միջոցով գրվում է՝ **«Շնորհակալություն: Ձեր դիմում-հայտը հաջողությամբ ընդունված է»** հաղորդագրությունը:

9. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերում անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում դիմորդը փաստաթղթեր ընդունող հանձնաժողովի կողմից պատշաճ կարգով իրազեկվում է այդ մասին և իրազեկման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում (բայց ոչ ուշ, քան մինչև թեստավորման կամ տեսահարցազրույցի սկիզբը) ներկայացնում է ճշգրտված փաստաթղթերը:

10. Դիմորդը, Ակադեմիա ընդունվելուց հետո, սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին անձամբ ներկայացնում է փաստաթղթեր ընդունող հանձնաժողովին, որը փաստաթղթերի պատճենները համեմատում է բնօրինակների հետ, ապա բնօրինակները վերադարձնում դիմորդին:

11. Հիմք ընդունելով դիմում-հայտը՝ դիմորդը հրավիրվում է մասնակցելու թեստավորման կամ առցանց հարցազրույցի:

12. «Կառավարում» մասնագիտության «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Մարդկային ռեսուրսների կառավարում» և «Զբոսաշրջության կառավարում» կրթական ծրագրերով ու «Ֆինանսներ» մասնագիտության «Ապահովագրական գործ» կրթական ծրագրով դիմորդները մասնակցում են միայն տեսահարցազրույցի, որով ստուգվում են դիմորդի ընդհանուր զարգացածությունը, բանավոր խոսքի մշակույթը, օտար լեզվի իմացությունը, ընդհանուր մտահորիզոնը և բազմագիտակությունը (էրուդիցիա):

13. Մյուս կրթական ծրագրերով մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները հանձնում են միայն թեստ, որը պարունակում է հարցեր Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և մասնագիտական առարկայից:

14. Թեստավորումն անցկացվում է Ակադեմիայում՝ նախապես ախտահանված լսարաններում՝ պարետատան ցուցումներով սահմանված պահանջներին համապատասխան:

15. Ակադեմիան ապահովում է յուրաքանչյուր դիմորդի ջերմաչափումը հեռահար ջերմաչափով և վարում գրանցամատյան:

16. Պետք է բացառել սուր շնչառական վարակների ախտանշաններով՝ ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն ունեցող այցելուների մուտքը Ակադեմիա և անհապաղ ահազանգել ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ 8003 համարով:

17. Թեստավորումն անց է կացվում առավելագույնը 10 դիմորդի մասնակցությամբ՝ պահպանելով մասնակիցների միջև նվազագույնը 1.5 մետր սոցիալական հեռավորություն:

16. Դիմորդներին տրամադրվում են բժշկական պաշտպանիչ դիմակներ և ձեռնոցներ:

18. Թեստավորումն անց է կացվում «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննության և հարցազրույցի անցկացման կարգի» 8-40-րդ կետերին համապատասխան:

19. «Կառավարում» մասնագիտության «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Մարդկային ռեսուրսների կառավարում» և «Զբոսաշրջության կառավարում» կրթական ծրագրերով ու «Ֆինանսներ» մասնագիտության «Ապահովագրական գործ» կրթական ծրագրով դիմորդների ընդունելության հարցազրույցն անցկացվում է առցանց եղանակով:

20. Դիմորդները նախատեսված ժամին միանում են Google Meet վիդեոկոնֆերանսի գործիքի միջոցով՝ նախապես տրամադրված օգտահաշիվներով:

21. Այն դիմորդները, որոնք ունեն առցանց հարցազրույցին մասնակցելու տեխնիկական դժվարություններ, նախօրոք կարող են դիմել Ակադեմիա, նրանց կտրամադրվի առանձին լսարան՝ բոլոր տեխնիկական հնարավորություններով և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմամբ:

22. Դիմորդները տեսակապով մեկ առ մեկ հրավիրվում են հարցազրույցի՝ իրենց քննական թերթիկների համարների աճող հերթականությամբ՝ նախապես հայտարարված ժամին:

23. Եթե դիմորդը ներկա չի գտնվում սպասման գոտում, և հարցազրույցին միանալու հայտ չի ներկայացնում առաջիկա 60 րոպեների ընթացքում (բայց ոչ ավել, քան մինչև տվյալ հարցազրույցի ավարտը), հանձնաժողովը իրավասու է համարել, որ այդ դիմորդը չի ներկայացել տեսահարցազրույցի:

24. Դիմորդը տեսահարցազրույցին մասնակցելու համար պարտավոր է՝

1) ունենալ համակարգիչ, անխափան և որակյալ ինտերնետային կապ և/կամ առնվազն 3G հեռախոսային ինտերնետային կապով օժտված հեռախոս սմարթֆոն, որը կապահովի տեսակապի անընդհատությունը,

2) տեսանելի ձևով ցուցադրել անձը հաստատող փաստաթուղթը,

3) սենյակում լինել միայնակ,

4) չունենալ այլ տեխնիկական միջոց,

5) նստել համակարգչից այնպիսի հեռավորության վրա, որ տեսահարցազրույցի ողջ ընթացքում համակարգչի տեսախցիկով տեսանելի լինի սեղանի մակերեսը, դիմորդի դեմքը, ձեռքերը: Երկար մազերը պետք է լինեն հավաքված:

25. Սույն կարգի 24-րդ կետով սահմանված պայմաններից առնվազն մեկի խախտման դեպքում դիմորդի տեսահարցազրույցը դադարեցվում է, դիմորդը համարվում է հարցազրույցը չանցած, անկախ նախօրոք տրված պատասխանի բովանդակությունից և ծավալից:

26. Տեսահարցազրույցի արդյունքները բողոքարկման ենթակա չեն:

27. Թեստավորման և տեսահարցազրույցի ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է: